ռաց նորա զայն Պապա Մինաս։ Թող զաւորական տուրս, զոր պահանջեն ատ յամէ․ Ջուխայ, մոմ, և զայլ իրս, եւ այնպէս ոչ կարէին զերծանիլ միաբանք 'ի նախատանաց և 'ի զանից, և 'ի վերայ նոցա յաւելին զայս եւս։ Յետ այնորիկ ետ գրել Յովհաննէս վարդապետ զայս ամենայն անցս դատաւորին, և գրեաց եւս ինքն առ Սահակ Պատրիարք եւ առաքեաց 'ի Կոստանդինուպօլիս դարմանել զիրսն․ գրեցին նաեւ Յոյնք և Լատինք առ իւրսն, յետ պատմելոյ նոցա զայլ և այլ չարիս Սխոնցւոց, յաւելին ասել՝ թէ որպէս հանին 'ի գերեզմանէ զդի դատաւորի իւրեանց՝ և ընկեցին 'ի բաց, և ապա խնդրեցին հանել զայլազգիսն 'ի Սխոնէ՝ և հրամանաւ Արքայի առաքել զնոսա 'ի Գաղա, և 'ի տեղիս նոցա բնակեցուցանել զԵէնիչէրիս, ՌՃԾԲ (1703)։

Իսկ Մինաս վարդապետ տեսեալ թէ դժուարին է այնուհետեւ կալ մնալ 'ի վանս Ս․ Յակոբայ, և խաղաղ կեանս վարել յերեսաց ոսոխաց իւրոց, յուղի անկեալ չոգաւ 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ 'ի սմին ժամանակի, 'ի 10 Օգոստոսի, եդին թագաւոր Օսմանցիք զՍուլթան Ահմէտ 'ի տեղի Սուլթան Մուստաֆայի․ բարձաւ 'ի կենաց Ֆէյզուլլահ էֆէնտին, պաշտպան Աւետիք վարդապետի։ Եւ Սուլթան Ահմէտ դարձաւ 'ի Կոստանդինուպօլիս Արքունեօք․ և Աւետիք վարդապետ եղեալ էր յԵէտիգուլէ 'ի դիպահւոջ։ Տեսեալ Մինաս վարդապետի զփոփոխութիւն ժամանակին, մատոյց գիր աղաչանաց 'ի Դուռն, և յայտ արար թէ՝ ո՛րպէս Աւետիք վարդապետ ձեռնըւութեամբ կամարարաց իւրոց, խաբէյութեամբ յափշտակեաց զՊատրիարքութիւն իւր, որ յառաջագոյն հաճութեամբ ազգին եւ Արքունի հրովարտակաւ ինքն էր, եւ թէ քանի՞ տուժից և վնասուց հանդիպեցաւ յերեսաց չարեաց նորին, եւ այլ սոցին նման բանք։ Ապա խնդրեաց վերստին դարձուցանել ինքեան զիշխանութիւն Պատրիարքութեան և 'ի բաց բառնալ զնեղութիւնս Աւետիքեանց․ զի մի այլ եւս ձեռն մխեսցեն 'ի գործս իւր եւ չարչարեսցեն զնա։ Եւ եղեւ 'ի ծանուցանելն Արքայի՝ շընորհեաց վերստին զՊատրիարքութիւնն Երուսաղէմի Մինաս վարդապետի Արքունի հրովարտակաւ, ՌՃԾԲ (1703)։ Դարձ արար Մինաս յԵրուսաղէմ․ գնաց ընդ նմա իւր օգ-